ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանական դպրոցի կառավարման
խորհրդի՝ 02 հունիսի 2014 թվականի
թիվ 6/4-Լ որոշմամբ
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

_____

ՀԱՍՏԱՏԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉՀԱՆՁՆԱԾ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Երևան, 2014

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն ծրագրով **(այսուհետև՝ Հատուկ ծրագիր)** սահմանվում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման քննությունները (համապատասխան մոդուլը) չհանձնած (անբավարար միավոր ստացած) ունկնդիրների՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում (**այսուհետ՝ Դպրոց**) Հատուկ ծրագրով ուսուցման ընթացակարգը։
2. Հատուկ ծրագրով ուսուցումը պարտադիր է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) որակավորման քննություններին (համապասխան մոդուլին) մասնակցած և բավարար միավորներ չստացած ունկնդիրների համար։
3. Հատուկ ծրագրով ուսուցման վճարի չափը սահմանում է Դպրոցի խորհուրդը։

II. Հատուկ ծրագրով ուսուցում

4. Հատուկ ծրագրով ուսուցումը ներառում է միայն այն մոդուլը, որից բացասական գնահատական է ստացել ունկնդիրը։
5. Եթե ունկնդիրը հաղթահարել (բավարար միավոր ստացել) է բոլոր մոդուլների նվազագույն շեմը, սակայն երեք մոդուլների միավորների հանրագումարի արդյունքում չի համարվել որակավորման քննությունը դրական հանձնած, ապա վերջինիս կարող է մասնակցել իր նախընտրած մոդուլով Հատուկ ծրագրին։
6. Հատուկ ծրագրով ուսուցման տևողությունը սահմանվում է Դպրոցի տնօրենի հաստատած ժամանակացույցով, որը չի կարող պակաս լինել 24 (քսանչորս) ակադեմիական ժամից։
7. Հատուկ ծրագրով ուսուցումը հիմնականում անցկացվում է գործնական վարժությունների կատարման միջոցով։
8. Հատուկ ծրագրով ուսուցումն անցկացվում է ըստ մասնագիտական ուղղվածության։
9. Քրեական ուղղվածություն ընտրած ունկնդրի համար հատուկ ծրագրով ուսուցումը ներառում է՝
   1) առաջին ատյանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելով, և (կամ)
   2) քրեական գործով միջանկյալ դատական կամ այլ ակտի դեմ բողոք կազմելով և (կամ)
   3) փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ խնդիրներ լուծելով։
10. Քաղաքացիական ուղղվածություն ընտրած ունկնդրի համար հատուկ ծրագրով ուսուցումը ներառում է՝
   1) առաջին ատյանի դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելով, և (կամ)
   2) քաղաքացիական գործով հայցադիմում կազմելով, և (կամ)

3) փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ խնդիրներ լուծելով:

11. Հատուկ ծրագրով ուսուցումն անցնելուց հետո Դպրոցի տնօրենը ունկնդրին տրամադրում է տեղեկանք: